

ԳԵՎՈՐԳ ԱՍԼԱՆՅԱՆ

Մաթեմատիկական մեթոդները և մոդելները
տնտեսագիտության մեջ, բակալավրիատ,
4-րդ կուրս

ՀՀ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հիմնաբառեր. անհավասարության գործակիցներ, Զինիի
գործակից, Թեյլի գործակից, անհավասա-
րության տրոհում

Հայաստանում վերջին տարիներին նկատվող եկամուտների անհավասարու-
թյան աճը պահանջում է եկամուտների բաշխման ավելի խորը ուսումնասիրություն:
Հոդվածում ներկայացվել է անհավասարության գործակիցների՝ ըստ բնակչության
խմբերի տրոհման մեթոդաբանությունը և այն կիրառվել է ՀՀ բնակչության եկամուտ-
ների վրա: Մասնավորապես ներկայացվել է անհավասարության գործակիցների
տրոհումն ըստ տնային տնտեսության բնակավայրի և տնային տնտեսության ղեկա-
վարի սեռի:

Անհավասարությունը կարող է բխել բնակչության տարբեր խմբերից,
պայմանավորվել տարբեր ազդեցությամբ (օրինակ՝ աշխատողները և թոշա-
կառուները, գյուղական և քաղաքային տնային տնտեսությունները, երեխա-
ներով և առանց երեխաների և այլն): Բնակչության եկամուտների անհավա-
սարության գնահատման ամենատարածված և հաճախ կիրառվող գործիք-
ները **անհավասարության գործակիցներն են:** Անհավասարության գնահա-
տականների կարևոր հատկություններից է տրոհելիությունը, այսինքն՝ հնա-
րավորությունը՝ յուրաքանչյուր խմբի կշիռը հաշվարկելու համախառն անհա-
վասարության մեջ:

Ընդհանուր առմամբ, անհավասարության գնահատականների տրոհելի-
ությունը համապատասխան կապ է պահանջում համախառն անհավասարու-
թյան և դրա մասերի միջև: Երբ գործ ունենք տրոհելիության հետ, պետք է
կարողանանք տարբերել ներխմբային անհավասարությունը (W) և միջխմբա-
յին անհավասարությունը (B): «**Ներխմբային անհավասարություն**» տարրը
ցույց է տալիս խմբի ներսում եկամտի անհավասարության հետևանքով
առաջացած անհավասարությունը, մինչդեռ, «**միջխմբային անհավասարու-
թյունը**»՝ տարբեր խմբերի միջև եկամտի անհավասարության պատճառով
առաջացած անհավասարությունը:

Օրինակ, եթե բնակչությունը բաժանված է գյուղական և քաղաքային
խմբերի, W տարրը ցույց է տալիս գյուղական և քաղաքային եկամուտների
անհավասարության ազդեցությունը անհավասարության վրա՝ առանձին-
առանձին վերցված: B տարրը, փոխարենը, անհավասարության աստիճանը
ցույց է տալիս՝ շնորհիվ խմբերի միջև եկամուտների ազդեցության:

Անհավասարության գործակցի՝ I, տրոհումը առաջացնում է միջխմբա-
յին, ներխմբային տարրեր և մնացորդային անդամ /residual term/¹.

¹ Տե՛ս L.Giovanni Bellu, Paolo Liberati "Policy Impacts on Inequality-Decomposition of Income
Inequality by Subgroups":

$$I = I_{WITH} + I_{BET} + K : \quad (1)$$

Դիտարկենք անհավասարության գնահատման ամենակիրառվող գործակիցները՝ Ջինիի գործակիցը¹ և ընդհանրական էնթրոպիայի դասի գործակիցները²: Ջինիի գործակիցը կատարյալ տրոհելի չէ, քանի որ այն, միջխմբային և ներխմբային անհավասարություններից բացի, ունի ոչ զրոյական մնացորդ՝ K :

Ենթադրենք՝ 2 խումբ՝ գյուղական (R) և քաղաքային (U), Ջինիի գործակցի ներխմբային էլեմենտ (G_{WIT}), որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$G_{WIT} = \left(\frac{n_U Y_U}{n Y} \right) G_U + \left(\frac{n_R Y_R}{n Y} \right) G_R \quad (2)$$

որտեղ՝ G_U -ն և G_R -ը Ջինիի գործակիցներն են՝ համապատասխանաբար քաղաքային և գյուղական եկամուտների համար: n_U -ն, n_R -ը քաղաքաբնակների և գյուղաբնակների քանակն է, n -ը՝ ամբողջ բնակչության քանակը, Y_U -ն, Y_R -ը և Y -ը քաղաքային, գյուղական և ամբողջական եկամուտներն են: Կլոր փակագծերը յուրաքանչյուր խմբին տրված կշիռներն են, որոնք իրենց հերթին ներկայացված են յուրաքանչյուր խմբի բնակչության մասնաբաժնի և յուրաքանչյուր խմբի եկամտի մասնաբաժնի արտադրյալի տեսքով: Ներխմբային տարրը տրոհելու համար միշտ պետք է հաշվարկենք ենթախմբերի գործակիցները և բազմապատկենք դրանք համապատասխան կշիռներով:

Ջինիի գործակցի միջխմբային տարրը՝ G_{BET} -ը, պետք է հաշվարկվի եկամուտների բաշխման համար, որտեղ իրական եկամուտները փոխարինված են ենթախմբերի միջին եկամուտներով: Օգտագործելով Ջինիի գործակցի կովարիացիայի բանաձևը՝ կունենանք՝

$$G_{BET} = \frac{2}{\bar{y}} Cov(\bar{y}, F(\bar{y})), \quad (3)$$

որտեղ՝ $\bar{y}$ -ը եկամտի բաշխումն է, որը ստացվում է իրական եկամուտները ենթախմբերի միջիններով փոխարինելու դեպքում:

Ջինիի գործակիցը ընդհանուր տրոհմանն [1] ավելացնում է մնացորդային անդամը՝ K : Այս անդամը չունի տնտեսագիտական հստակ մեկնաբանություն:

Անհավասարության ընդհանրական էնթրոպիայի դասի գործակիցները, ի տարբերություն Ջինիի գործակցի, կատարյալ/լրիվ տրոհվող են՝ առանց մնացորդային անդամի: Սկսենք ընդհանրական էնթրոպիայի ամենաընդհանուր անդամից՝ Թեյլի գործակցից: Դիտարկենք m խումբը, որի տրոհումը ենթադրում է հետևյալ տեսքը.

$$T = \sum_{k=1}^m \left(\frac{n_k \bar{y}_k}{n \bar{y}} \right) T_k + \sum_{k=1}^m \frac{n_k}{n} \left(\frac{\bar{y}_k}{\bar{y}} \right) \ln \left(\frac{\bar{y}_k}{\bar{y}} \right): \quad (4)$$

WITHIN BETWEEN

¹ Տե՛ս L. Giovanni Bellu, Paolo Liberati "Inequality Analysis -The Gini Index":

² Տե՛ս Lorenzo Giovanni Bellu, Paolo Liberati "Describing Income Inequality-Theil Index and Entropy Class Indexes":

[4]-ի 1-ին անդամը յուրաքանչյուր խմբի Թեյլի գործակիցների՝ T_k , կշռված միջինն է՝ ներկայացված համախառն եկամտի համապատասխան եկամտային խմբի մասնաբաժինների կշիռներով: Սա տրոհման **ներխմբային** մասն է:

2-րդ անդամը Թեյլի գործակիցն է՝ հաշվարկված ենթախմբերի միջիններով՝ իրական եկամտի փոխարեն: Սա տրոհման **միջխմբային** մասն է:

Թեյլի գործակիցը ընդհանրական էնթրոպիայի դասի՝ անհավասարության գործակիցների անդամ է: Այս դասի անդամները կատարյալ/լրիվ տրոհվող են՝ ըստ ներխմբային և միջխմբային տարրերի: Օգտվելով ընդհանրական էնթրոպիայի ընդհանուր բանաձևից՝ տրոհումը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

$$T = \underbrace{\sum_{k=1}^m \left(\frac{\bar{y}_k}{\bar{y}}\right)^\alpha \left(\frac{n_k}{n}\right)^{1-\alpha} GE(\alpha)_i}_{\text{WITHIN}} + \underbrace{\frac{1}{(\alpha^2 - \alpha)} \left[\sum_{k=1}^m \frac{n_k}{n} \left(\frac{\bar{y}_k}{\bar{y}}\right)^\alpha - 1 \right]}_{\text{BETWEEN}}, \quad (5)$$

որտեղ՝ համապատասխան միջինները և բնակչության մասնաբաժինները մեծացվել են համապատասխանաբար α -ով և $(1 - \alpha)$ -ով (աստիճաններով), իսկ $GE(\alpha)_i$ -ն i -րդ ենթախմբի ընդհանրական էնթրոպիայի ցուցանիշն է: Մնացած անդամները ունեն սովորական իմաստ:

Առաջին անդամը կրկին ներխմբային մասն է: Դա ընդհանրական էնթրոպիայի ցուցանիշների կշռված միջինն է: 2-րդ անդամը միջխմբային տարրն է, հաշվարկվում է որպես ԸԷ-ի գործակից, որտեղ իրական եկամուտները փոխարինված են ենթախմբերի միջիններով:

ՀՀ բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մակարդակը 2008–2016 թթ. տատանողական բնույթ է կրել:

Աղյուսակ 1

Տնային տնտեսությունների եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները 2008–2016 թթ.

	Թեյլի էնթրոպիա $E(1)$					Ջինիի գործակից				
	2008	2010	2012	2014	2016	2008	2010	2012	2014	2016
1. Դրամական եկամուտներ	0.240	0.367	0.335	0.289	0.282	0.365	0.392	0.405	0.400	0.409
2. Ոչ դրամական եկամուտներ	0.883	0.963	1.024	0.930	0.947	0.688	0.697	0.722	0.698	0.704
Ընդամենը ամբողջական եկամուտ	0.198	0.319	0.296	0.256	0.250	0.331	0.360	0.377	0.376	0.386

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ

Ջինիի գործակիցը 2008 թ. կազմել է 0.332, իսկ 2012 թ. աճել է մինչև 0.377: 2013 թ. նվազել է մինչև 0.365 և 2016 թ., նորից աճելով, դարձել է 0.386: Թեյլի գործակիցը 2008 թ. եղել է 0.198, իսկ 2010 թ. աճել է մինչև 0.319, որից հետո սկսել է նվազել և 2016 թ. կազմել է 0.251: Թեև 2016 թ. Թեյլի գործակիցը ավելի մեծ է, քան 2008 թ., այնուհանդերձ, վերջին տարիներին այն ունի նվազող բնույթ:

Այսպիսով, Թեյլի և Ջինիի գործակիցները ցույց են տալիս, որ անհավասարության մակարդակը դրամական և ամբողջական եկամուտների դեպքում գրեթե նույնն է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրամական եկամուտները կազմում են ամբողջական եկամտի 90%-ից էլ ավելին: Ոչ դրամական եկամտի դեպքում անհավասարությունը շատ ավելի մեծ է, քան դրամականի կամ ամբողջականի դեպքում: Սրա հիմնական պատճառն այն է, որ ոչ դրամական եկամուտներ ստանում են սակավաթիվ տնային տնտեսություններ, և դրանց հիմնական մասը գյուղաբնակներն են: Սրանից հետևում է, որ անհավասարությունը երկրում 2008–2016 թթ. աճել է:

Նշվել է, որ Ջինիի գործակցի տրոհման արդյունքում առաջանում է մնացորդ, որը չունի տնտեսագիտական հստակ մեկնաբանություն: Այդ իսկ պատճառով Ջինիի գործակցի տրոհումը ըստ բնակչության խմբերի այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ մնացորդի առկայության դեպքում դժվարանում է մնացած տարրերի մեկնաբանությունը: Որպես օրինակ դիտարկվել է Ջինիի գործակցի տրոհումը ըստ բնակավայրի, 2016 թ. համար:

Աղյուսակ 2

Ջինիի գործակցի տրոհումն ըստ բնակավայրի, 2016 թ.

	Ջինիի գործակից		Բնակչության մասնաբաժին		Եկամուտների մասնաբաժին		Բացարձակ մասնակցություն	
	Դրամ.	Ոչ դրամ.	Դրամ.	Ոչ դրամ.	Դրամ.	Ոչ դրամ.	Դրամ.	Ոչ դրամ.
Երևան	0.387	0.858	0.333	0.333	0.443	0.133	0.057	0.038
Քաղաք	0.346	0.802	0.303	0.303	0.265	0.135	0.028	0.033
Գյուղ	0.432	0.448	0.364	0.364	0.291	0.732	0.046	0.119
	Ներխմբային		Միջխմբային		Մնացորդ(Կ)		Ամբողջական	
Ոչ դրամական	0.19		0.373		0.1407		0.7036	
Դրամական	1.13		0.118		0.1603		0.4093	

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ

Աղյուսակ 2-ի տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ անհավասարության մակարդակը ավելի բարձր է ոչ դրամական եկամուտների դեպքում: Եթե Երևանում և այլ քաղաքներում Ջինիի գործակիցը դրամական եկամուտների համար կազմում է համապատասխանաբար 0.387 և 0.346, ապա ոչ դրամականի դեպքում այն հավասար է 0.858-ի և 0.802-ի: Մյուս կողմից, գյուղերում պատկերը գրեթե նույնն է դրամական և ոչ դրամական եկամուտների դեպքում՝ համապատասխանաբար 0.432 և 0.448: Դա կախված է նաև այն հանգամանքից, որ ոչ դրամական եկամուտների գրեթե 73%-ը պատկանում է գյուղաբնակներին: Այս ամենի հետևանքով ոչ դրամական եկամուտների դեպքում գյուղաբնակների բացարձակ մասնակցությունը ներխմբային տարրի մեջ հավասար է 0.119-ի, երբ ներխմբային տարրը հավասար է 0.19-ի: Կարելի է նկատել, որ ոչ դրամական եկամուտների դեպքում միջխմբային տարրը հավասար է 0.373-ի, իսկ դրամականի դեպքում՝ 0.118-ի: Ինչ վերաբերում է մնացորդին, ապա այն դրամական եկամուտների տրոհման պարագայում հավասար է 0.1603-ի և ամբողջական գործակցի մեջ ունի ամենամեծ կշիռը, մինչդեռ, ոչ դրամական եկամուտների տրոհման դեպքում այն հավասար է 0.1407-ի և ունի ամենափոքր կշիռը: Այս ամենը կախված է այն հանգամանքից, որ ոչ դրամական եկամուտների դեպքում խմբերի միջև անհավասարությունը ավելի մեծ է, քան դրամականի դեպքում,

ինչպես նաև, որ ոչ դրամական եկամուտների դեպքում խմբերում վերադասակարգման հետևանքով էական փոփոխություններ չեն առաջանում:

Տրոհենք Թեյլի գործակիցը ըստ բնակավայրի (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Թեյլի գործակցի տրոհումն ըստ բնակավայրի, 2008–2016 թթ.

Տարի	Թեյլի գործակից			Բնակչության մասնաբաժին			Բացարձակ մասնակց.			Ներխրմբ.	Միջխրմբ.	Ամբողջ
	Երևան	Քաղաք	գյուղ	Երևան	Քաղաք	գյուղ	Երևան	Քաղաք	գյուղ			
2008	0.222	0.193	0.15	0.339	0.310	0.351	0.087	0.055	0.048	0.19	0.006	0.197
2010	0.209	0.567	0.194	0.341	0.301	0.357	0.085	0.164	0.058	0.307	0.011	0.319
2012	0.229	0.224	0.393	0.338	0.304	0.357	0.096	0.058	0.127	0.281	0.014	0.295
2014	0.224	0.263	0.251	0.325	0.310	0.364	0.088	0.078	0.077	0.244	0.012	0.256
2016	0.238	0.195	0.250	0.333	0.303	0.364	0.102	0.050	0.079	0.230	0.019	0.250

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ ՏՏԿԱՀ

Երևանի և գյուղերի համար հաշվարկված Թեյլի գործակցի շարժընթացն այս տարիներին նմանատիպ է, սակայն եթե Երևանում անհավասարության մակարդակը համեմատաբար կայուն է եղել, ապա գյուղաբնակների շրջանում այն էականորեն փոփոխվել է: Գյուղերում 2008 թ. Թեյլի գործակիցը հավասար է եղել 0.15-ի, 2012 թ. այն աճել է մինչև 0.393, իսկ 2016 թ. նվազել մինչև 0.250: Քաղաքներում անհավասարության մակարդակը եղել է անկայուն: 2008 թ. այն կազմել է 0.193, 2010 թ. աճել է մինչև 0.567, իսկ 2016 թ. նվազել է մինչև 0.195: Ներխմբային տարրի մեջ 2008–2016 թթ. ընթացքում ամենամեծ կշիռը սովորաբար ունեցել է Երևանը՝ բացառությամբ 2010 թ., երբ ներխմբային տարրը հավասար էր 0.307-ի, իսկ քաղաքային բնակավայրի բացարձակ մասնակցությունը՝ 0.164-ի: 2012 թ. ամենամեծ մասնակցությունն ունեցել է գյուղական բնակավայրը՝ 0.127, երբ ներխմբային տարրը հավասար է եղել 0.281-ի:

Անհավասարության ցուցանիշի մեջ էական տեղ է զբաղեցրել ներխմբային տարրը, իսկ միջխմբայինը չափազանց փոքր է եղել: Կարելի է նկատել, որ ներխմբային տարրի շարժընթացը համապատասխանում է ամբողջական գործակցի շարժընթացին: Այս դեպքում ևս այն սկզբում աճել է, հետո կայուն կերպով նվազել: 2008 թ. այն հավասար է եղել 0.19-ի, 2010 թ. աճել է մինչև 0.307, իսկ 2016 թ. նվազել է մինչև 0.230: Ուսումնասիրելով այս ցուցանիշները՝ կարելի է հստակ սահմանել, որ անհավասարությունը գլխավորապես պայմանավորված է եղել ներխմբային անհավասարությամբ, իսկ միջխմբային անհավասարությունը շատ փոքր է եղել:

Թեյլի գործակիցը տրոհենք ըստ տնային տնտեսության ղեկավարի սեռի (տե՛ս աղյուսակ 4):

Այս խմբերի համար առանձին հաշվարկված Թեյլի գործակիցները կրել են տատանվող բնույթ: Ամեն տարի անհավասարության մակարդակը ավելի բարձր է եղել խմբերից որևէ մեկում: Նշված ժամանակահատվածում տղամարդկանց քանակը միշտ կազմել է շուրջ 75%, այդ իսկ պատճառով էլ այդ խմբի կշիռը ներխմբային տարրի մեջ կազմել է շուրջ 74%: Այս տրոհման

դեպքում նույնպես ամբողջական գործակցի էական մասը կազմում է ներխմբային տարրը: Որոշ տարիների այն եղել է գրեթե նույնը և հետևաբար դրանց շարժընթացը ևս նույնն է եղել: Միջխմբային տարրը իր առավելագույն արժեքը ընդունել է 2010 թ. և կազմել է 0.002, իսկ նվազագույն արժեքը՝ 2014 թ.՝ 0.00006: Սա նշանակում է, որ անհավասարությունը մեծավ մասամբ կախված է խմբերի ներսում անհավասարությունից, իսկ խմբերի միջև անհավասարությունը գրեթե բացակայում է:

Աղյուսակ 4

Թեյլի գործակցի տրոհումն ըստ տնային տնտեսության ղեկավարի սեռի, 2008–2016 թթ.

Տարի	Թեյլի գործակցի		Բնակչության մասնաբաժին		Բացարձակ մասնակցություն		Ներխմբային	Միջխմբային	Ամբողջական
	տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին			
2008	0.196	0.198	0.74	0.259	0.147	0.050	0.196	0.0001	0.197
2010	0.358	0.177	0.739	0.261	0.275	0.040	0.316	0.002	0.319
2012	0.304	0.269	0.739	0.261	0.228	0.067	0.295	0.0003	0.296
2014	0.252	0.268	0.742	0.257	0.188	0.068	0.255	0.00006	0.256
2016	0.243	0.268	0.735	0.265	0.181	0.068	0.249	0.0002	0.250

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ

Այսպիսով, հողվածում ներկայացվեց Հայաստանի տնային տնտեսությունների եկամուտների տրոհումն ըստ բնակավայրերի և ղեկավարի սեռի: ՀՀ բնակչության եկամուտների բաշխման անհավասարության մակարդակը 2008–2016 թթ. տատանողական բնույթ է կրել: Վերլուծությունները ցույց տվեցին, որ անհավասարության ցուցանիշների մեջ էական տեղ է զբաղեցրել ներխմբային տարրը, իսկ միջխմբայինը չափազանց փոքր է եղել: Կարելի է նկատել, որ ներխմբային տարրի շարժընթացը համապատասխանում է ամբողջական գործակցի շարժընթացին:

ГЕВОРГ АСЛАНЯН

ОЦЕНКА СТРУКТУРЫ НЕРАВЕНСТВА ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ РА

Ключевые слова: коэффициент неравенства, коэффициент Джини, коэффициент Тейли, разделение неравенства.

Заметное увеличение неравенства доходов в Армении, за последние несколько лет, требует более глубокого изучения распределения этих доходов. В статье представлена примененная к доходам населения Армении методология дробления коэффициентов неравенства по группам населения. В частности, было представлено дробление коэффициентов неравенства по месту жительства домохозяйства и по полу управленца домохозяйства.

GEVORG ASLANYAN

ASSESSMENT OF THE STRUCTURE OF INCOME INEQUALITY IN THE RA

Key words: coefficient of inequality, Gini coefficient, Telly coefficient, separation of inequality.

The growth of income inequality, observed in recent years in Armenia, requires a deeper study of the income distribution. The article presents a methodology for

decomposing inequality coefficients by population groups. That methodology was applied to the incomes of the Armenian population. In particular, was discussed the Gini Index and the Theil Index decomposition by the settlement of households and by the sex of the head of household.

ԷԼԵՆ ԱՎԱԼՅԱՆ

Հաշվապահական հաշվառում ըստ ճյուղերի,
մագիստրատուրա, 2-րդ կուրս

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼԻ ՎՐԱ ՆՅՈՒԹԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. նյութատարություն, նյութածախս, շահութաբերություն, արտադրության ծավալ

Արտադրության նյութատար ոլորտում կարևոր դեր ունի հումքի և նյութերի օգտագործման արդյունավետության բարձրացումը, քանի որ դրանց հետ կապված ծախսերն արտադրանքի ինքնարժեքում գերակշիռ մաս են կազմում, և յուրաքանչյուր միավորի թողարկման ընթացքում այդ ծախսերի չնչին կրճատումն անգամ ամբողջ կազմակերպության մասշտաբով նշանակալի արդյունք է տալիս:

Եթե կազմակերպությունը իր առջև շահույթ ստանալու խնդիր է դրել, ապա միջոցները պետք է օգտագործվեն առավել արդյունավետ:

Ներկայումս ցանկացած արտադրական կազմակերպության կարևորագույն խնդիրներից է նյութական պաշարների խնայողական օգտագործումը, քանի որ հենց նյութական ծախսումներն են կազմում արտադրական ծախսումների մեծ մասը, որոնցից անմիջականորեն կախված է շահույթի մեծությունը:

Նյութերի արդյունավետ օգտագործումը հանգեցնում է կազմակերպության փնտեսական գործունեության բարելավմանը, շահութաբերության ցուցանիշների բարձրացմանը: Նյութական պաշարների խնայողական օգտագործումը բարելավում է արտադրության արդյունավետությունը բնութագրող փնտեսական ցուցանիշները, իսկ նյութական պաշարների թերագնահատումը կարող է հանգեցնել արտադրական ծրագրի չեղարկմանը և այլն:

Կարևորագույն խնդիրներից են նաև նյութատարության կրճատումը, բոլոր այն գործոնների ուսումնասիրությունը, որոնցից կախված է հումքի և նյութերի արդյունավետ օգտագործումը:

Նյութական պաշարների կառավարումը կազմակերպության համար ունի մեծ նշանակություն ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ ֆինանսական առումով: Մեր օրերում լայնորեն կիրառվում են ինչպես բնական, այնպես էլ արհեստական նյութական պաշարներ, իսկ արտադրական և կենցաղային թափոնները համարվում են երկրորդային նյութական պաշարներ¹:

Եթե յուրաքանչյուր կազմակերպությունում արտադրության գործընթացն անընդհատ է, ապա ընթացիկ ակտիվները գտնվում են միաժամանակ և՛ արտադրության, և՛ շրջանառության փուլում:

Գոյություն ունեն պաշարները խնայողաբար օգտագործելու աղբյուրներ և ուղիներ: Խնայողության աղբյուրները մատնանշում են, թե ինչի հաշվին

¹ Տե՛ս Ս. Բ. Бердникова, Анализ и диагностика финансово-хозяйственной деятельности предприятия, Москва, 2007 г., էջ 139: